

նոր դամբարանին վրայ կը գրուի հետեւեալը . ի զարեհ Յովհաննու կարողիկոսին խնամաստիոյ Օձնեցոյ : 1832ին յօրինած է Հանսոսութիւն ճարտասանութեան անուէ գիրք մը զոր ընդօրինակած է իր աշակերտը Արժաշեցի Եղիա դպիր (Ստեփանեան (Արևւշ. Յուգ. Թ. 116) : 1840ին կամ աւելի կանուէս շինած է նաև Հանսոս վիճակագրութիւնը Կիլիկիոյ (Մխուան , էջ 141) : Ս . Յակոբի վանքէն 1848 Ապր . 11ին իրեն գրուած նամակի մը բովանդակութենէն կը տեսնուի որ Մուրատ վարժապետ՝ բացի իր Աբրահամ զաւակէն՝ ունեցած է նաև Տիգրան , Եղիարդ , Մարիամ և մեծն Խոսրով անուամբ զաւակներ (Վրթ .) . անգրանիկը Աբրահամ՝ Ս . Յակոբի վանքին տպարանը կը յաճախէ գրաշարութիւն սովորելու համար , իր նուէր ստացած ավ մը տառերով նախ կը յաջողի շարել Հայր Անրը , զոր իր իսկ ձեռքով կը տպագրէ հօրը աջակցութեամբը , յետոյ նոյն տպարանին մէջ կը տպագրէ Աղօթագիրք մը և Այբեկարան մը : Հօրը հետ կը վերագտնայ Նիկոմիդիա , և կը հրատարակէ Հայրեկատար թերթը (1850-53) , յաջորդաբար կը հաստատուի Սկիւտար , Փարիզ և Եգիպտոս , Փարիզի մէջ կը հրատարակէ իր Փարիզը (1860-62) , իսկ Եգիպտոսի մէջ Արևաեկին (1863-1865) : 1870—1903 վարած է ուսուցչական պաշտօններ . 1903ին ալ վախճանած է Կ . Պոլիս , Ազգ . Որբանոցիին մէջ , ուր նոյն ժամանակ կը պաշտօնավարէր :